

նորոգներն, բարձրագոյն ուսում ստացածներն անընդունակութիւնը, նրանց տգիտութիւնը, որ և է աշխատանքին նրանց անտուր լինելը, վերջապէս նրանց կատարեալ դարդակութիւնը:

Համալսարանական մասի ներկայացուցիչները մեզանում ի հարկէ, սրտի խորքից կատեն այն լքրապիրը, որ հանեց նրանց երեսից կեղծաւոր դիմակը, մերկացրեց նրանց, ոչնչացրեց նրանց չորս կողմ եղած շինձու փայլը:

Այդ պատճառով մենք միայն ձեզ ենք դիմում և ձեզ վրա միայն յոյս ունենք, հայ հասարակութեան միջին դաս, մանր վաճառականներ, գործակատարներ, բաժանաններ, ուսուցիչներ, մանր աստիճանաւորներ, գրագէտ գիւղացիներ և արուեստաւորներ և դուք ամեն դասակարգի հայ կանայք, դուք որ դեռ ևս պահպանել էք ձեր մէջ արդարութեան նուրբ և մաքուր զգացմունքը, ձեզ ենք դիմում խնդրելով որ պահպանեք «Մըշակը»:

Մեր լրագիրը պահպանելու մէջ մենք միմիայն մեր հասարակութեան միջին դասի վրա յոյս ունենք, որովհետեւ մենք այդ միջին դասը մեր հասարակութեան ամենաազնիւ դասն ենք համարում և միշտ անկեղծ կերպով պաշտպանել ենք նրա շահերը:

Մեզ համար և առհասարակ

հայերիս մէջ ամեն նոր, առաջադէմ, օգտակար գործի համար, այն հայը որ բարձրագոյն ուսում է ստացել, նա կատարելապէս կորած է, որովհետեւ հայը միայն այն ժամանակ անտարբեր չէ մնում դէպի ազգային մի որ և է բարոյական և մտաւոր շարժում մինչև որ նա համալսարանում իր ուսումը չէ աւարտել... Բայց հէնց որ նա համալսարանական ուսում ունի, նա այնուհետեւ կորած է լինում ազգի մտաւոր և բարոյական կեանքի համար...

Համալսարանականը մտածում է միմիայն իր փորի վրա և կատարելապէս ետական է դառնում:

Մեր համալսարանականները գիտեն, որ հայոց հասարակութեան մի մաս կարող է միմիայն կարգաւ հայերէն լեզուով, ուրեմն ժողովրդի այդ մասի համար հարկաւոր է հայերէն ամենօրեայ թերթ: Ուրեմն թող իրանք բարձր ուսում ստացածները չը կարգային այդ թերթը, որովհետեւ իրանք ամեն քան դիտեն և մի հայոց լրագրից նոր բան սովորել չեն կարող, բայց գոնէ թող գրվէին լրագրին, որ այդպիսով միջոց տային լրագրին պահպանվելու և ուրեմն ուրիշ կողմից միջոց տային հայոց հասարակութեան այն մասին, որ բացի հայերէնից ուրիշ լեզու չը գիտէ, ու-

նենալ ընթերցանութեան մի թերթ:

Բայց ի հարկէ այդ շահաւէտ չէ համալսարանականներին՝ պահպանել մի թերթ, որ անդադար մտրակում է նրանց և մերկացնում է նրանց ժողովրդի առջև... Այս յանկարծ այն մարդիկ որոնց հեղինակութիւնը ժողովուրդը կոյր կերպով պաշտում էր, յայտնիեցան տգէտ, անուս, ծոյլ, անգործ, անկիրթ, ետական, շահասէր, հարստահարող և թշնամի ժողովրդի ամեն տեսակ առաջադիմութեան...

Ուրեմն համալսարանականներին էլ հարկաւոր է ունենալ իրանց սեփական օրգան, որի օգնութեամբ նրանք կարող էին մոլորեցնել միամիտ ամբօխը...

Բայց այդ տեսակ օրգան հիմնելու համար, հաստատեցք, որ նրանք իրանք իրանց գրպանից մի կօպէկ չեն տայ, չեն ծածկի լրագրի գէֆիցիտը, որ կարող է ամեն տարի հասնել հազարների, — այլ նոյն խակ ժողովրդից կը գջլեն նրա փողերը, նրա փողերով իրանց անձը փառաբանելու նպատակով մի օրգան կը հիմնեն, և ժողովրդից դուրս գջլած փողով ժողովրդին կը մոլորեցնեն:

Գ. Ա.

**ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կենդանիների հոխանաւորութեան թիֆլիսի ընկերութեան անդամները հրատարակում են. 1) Ներկայ դանիլը ընդհանուր ժողովին յունվարի 20-ին, երեկոյան 7 ժամին Գիւղատնտեսական ընկերութեան բնակարանի մէջ, որ գտնուում է Բարխաւովնակայա փողոցի վրա, Ալէքսանդրեան այգիում: Կարող են ներկայ գտնվել նոյնպէս գործով հետաքրքրվող մասնաւոր անձինք: 2) Վճարել անդամական տուրքը ընկերութեան դանձապահ պ. կատ. մովին իր աւետարական տան մէջ փոստային երկրորդ փողոցի վրա, Ալէքսանդրեան այգու գիմաջը, թուժանովի տանը ամեն օր առաւօտան 9—12 ժամը:

Ա. Ա. ԲՍԱՆԳՐԱՊՈՒԹՅՈՒՆ մեզ գրում են. «Հաստատ ազգայնական սեղեկանում ենք, որ առաջիկա դարձանամ տնային կառավարութեան թղթատուութեամբ 25,000 պուղաչափ ցորեն սիտի բաժանվի թագաւորական ամբարներից մեր չքաւոր երկրագործներին ցանկու համար»:

Մեզ գրում են Ա. Ա. ԲՍԱՆԳՐԱՊՈՒԹՅՈՒՆ. «Այստեղ սարսափելի ցորեն են անում: Մեր ձերերը գոնեա այսպիսի ցուրտ ձմեռ շատ քիչ են յիշում, թանգութիւնը անտանկի է: Մեր քաղաքը օրստօրէ չքաւորութեան կերպարանքն է տանում: Այրի պուղը վերջին ժամանակները բարձրացաւ մինչև 3 ռ. 40 կ.: Հաւանական է, որ աւելի թանկանայ»:

Գ. օգիտու աղայների ֆրանսիական ցիրկում թիֆլիսի մի քանի անգամ ներկայացրին «Գայթակղեցող դև» ֆանտաստիկական նշանախաղ—պարսիազգը, որ կազմված է պ. կրիսկուտի պարող արտիստից: Պարսիազգը կրկնվելու է շաբաթ յունվարի 19-ին:

Ա. Ա. ԲԱՍԱՆԳՐԱՊՈՒԹՅՈՒՆ մեզ հաղորդում են, որ ներկայ 1880 թուականին տեղական ընթերցարանը ստանալու է՝ Մշակ, Մեղու, Մանկավարժական թերթ, փարոս Հայաստանի, Тифл. Вѣстн., Кавказъ, Русскій Курьеръ, Живописное обозрѣніе, Всем. Иллюстрація, Стрекоза, Недѣля, Свѣтъ и Тѣни и Мірскаго Толкѣ, Вѣстн. Евр. и Отеч. Записки: Հիմնադիր անդամները բացի միանուագ վճարած 10 ռուբլուց, վճարում են նոյնքան, որքան միւս ընթերցող անդամները, այն է ամսական 30 կօպ:

փելով բղաւց և արշինանոց քանոնը սփրկելու կընքեց մի քանանայացուի դիմին, որի ճակատից արհնը թափուկով լաց արած տետրակի վրա, կազմուեցան գեղեցիկ դետակներ, կղզիներ, թերակղզիներ ծոցեր և այլն:

— Կու, թաքար բռնք տեսնեմ:

— Փո. է, վէ, բէ...

— Չէ դու, չեղաւ. կրկին կատաղեց վարժապետը և մէկի երկար մազերից բռնած դուրս չիտուեց, մի քանի խզալի բունցք էլ խնդիլ քամակին կայծերով:

Այն նրան, ով որ մի մաղաչափ կը սխալվեր, խնդն մազերից բռնած պատկապտ կը տար: Գլուխ կտորել, աչք կպատայնել, ամբողջ օրով չչքացնել անյիշելի բաւերով հայոցի՝ սովորական բաներ էր մեր վարժապետի համար:— Կ'նչ անէին խնդճ աչակերտները. դուրս դնալու նար չը կար, որովհետեւ թէ տարեկան սնունդը և թէ թուակը կանխիկ էին վճարել, մանաւանդ առանց ձայնագրութեան քանանայ ձեռնադրուիլը անկարելի էր. ուրեմն պիտի համբերէին, ուրիշ նար չը կար:

Մի օր երբ որ այսպիսի արհնաճանութեամբ ձիւղտախառն ձայնագրութիւն էին սովորում, ներս մտաւ դպրոցի տեսուչը, որի մասին մի համառօտ տեղեկութիւն տալու համար աւելորդ չի լինի ասել որ նա (տեսուչը) ընդունակ էր միայն արագակութեան, զոգութեան և քսութեան մէջ: Մինչև այսօր էլ նա իր արհնաբարտ երկասցիի դաշուներ անընտան էր պահում իրանից: Թէ դրել և թէ կարգաւ այնքան գիտէր որ կարողանում էր վաճարել եւ մտաւորը դրել և ամեն ամբա հաշի ներկայացնել իրանից մեծ տեսչին: Հն էն էի ասում, ներս մտաւ դաշուաւոր տեսուչը և ուղղակի հրամայեց,

Վարժապետ, երկու աչակերտ այսօր ուղարկիր թող վաճարի չայրը հնձն, երկու աչակերտ էլ ուղարկիր որ հայաթը, դաները լաւ մաքրեն այս մարդին էլ մի վկայական տուր թէ ձայնագրու-

թիւնը աւարտել է, թող դնայ տէր տէր դասնայ:

— Վերջին առաջարկութիւնը դուր չեկաւ մեզ վաղուց ծանօթ վարժապետ Պէտրովին, այդ պատճառով մի քիչ այրաւած հարցրեց մեծապատիւ տեսչից:

— Ո՞վ է այդ մարդը, ես դրան ամենին դաս չեմ տուել, ինչպէս վկայական տամ:

— Ո՞վ կ'ըսէ, կ'ըսէ. քու ինչ բանդ է. քեզ ինչ ասում են, լսիր:

— Հի, էիլ բերանդ քաղցրացել է հաւ:

— Ի՞նչ քու գործդ չի, քեզ փող ենք տալիս, ինչ ասում ենք արն, պատասխանատուն մենք ենք:

— Չէ, եղբայր, ես էք բանը չեմ կարա անել, գնա, ինչ որ աւել ես դրանից, բեր կիսներ, ես էլ վկայական տամ:

— Հէջ մի կօպէկ էլ չեմ տամ որ աչքդ կօխես, քեզ ասում են վկայական տուր, եթէ ոչ, դուրս այստեղից:

Այստեղ երկուսի էլ համբերութիւնը հատու վարժապետ ու տեսուչ սլուովեցան իրար ու օղբերմ, վեր ընկան յատակի վրա: Պատերազմը սաստկացաւ. տեսուչը դաշուներ քաշեց, աչակերտները երկու կուսակցութեան բաժանվեցին: Պատերազմը զարնուրէի էր, վարժապետի ճակատից մի կարմիր աղբիւր էր դուրս գալիս. տեսչի քիթը ու պոտենիը ջրաթուած էր: Գիւղի բնակիչների միջամտութեամբ պատերազմը վերջացաւ, բայց պատերազմի դաշուում մի շարժից աւելի դեռ երևում էին քանանայացուների միտքների մաղբը: Քանոնների և թանաքամանների կտորներ:

Անցկացաւ չինգ օր: Մեծ տեսուչը եկաւ քննութեան տեսուչը արդարացաւ: Վարժապետ Պետուն, որպէս յանցաւոր, իր չուր ու փաշտոք հաւաքեց, վաճարի պարտից դուրս ելաւ ու անյայտացաւ:

V.

Անց կացաւ երեք տարի: 18... թուականն էր: Այստեղ գետից դէպի արևմուտք բոլոր դաշ-

տերը մարդկեղէն անտառ էր դառել. զարնուրէի պատերազմ էր: Հրացանների ճոճոցը, թնդանթների գոռոցը, կառքերի դղրթիւնը, բազմութեան խառնիճաղանջ ազմուկը, երկարների խրինճոցը, վիրաւորեալների սկիւռ աւաղան խառնուելով միմեանց հետ հողային գունտը մարդի ոտքերի տակ դողացնում էին: Փողը հեղեղի պէս թափուած էր ամեն տեսակ աշխատաւորի գլխին: Որտեղ մի թոկից փախած կար, դուքան էր բացել ու փող էր աշխատում: Այս ժամանակ մի նոր նուաճած քաղաքի խուլ փողոցներից միում գտնվում էր մի գինետուն, որի ջերմեանդ երկրպագուները ինչ անտակ անկարողութիւն, աւաղակութիւն և անբարոյականութիւն ասես որ չէին գործում այդ անիծեալ տան մէջ: Գինետան կառաւարչին առաջին անգամ տեսնողը կը կարծէր թէ մի չափուուն կամ մի աւաղակ է: Լաւ նուրբ ուշադրութիւն պէտք է դարցնէր որ կարողանայիր ճանաչել մեր Պետային որ պատերազմի յաջող հանդամանքներից օգուտ քաղելով ինքն էլ է սկսել միկիտանջութիւն անել: Տիրացու Պետուն կարմիր աղուղը լատիկ արխաւուղի վրա առաջը կապած, թեքը կիսին հետ քշած, մի դրապոնի հին շափուայ գլուխը անցկացրած, ոտից մինչև դուխը զանազան տեսակ կեղտերով օծուած, այժի նման թռչկոտում էր և հազիւ էր կարողանում իր բազմաթիւ մուշտարիներու դանազան տեսակ պահանջները կատարել: Խնդն մի քանի ժամանակ չունէ, հանգստանալու, Տիրացու Պետուն ոչ միայն 10 կօպէկի բանը 10 շահու էր վաճառում, այլ փող աշխատելու համար հարազատութիւններ էլ էր գործ դնում. օրինակ նա մի վեղորջ գինու հետ երկու վեղորջու էր խառնում և վաճառում խնդճ մուշտարիքու վրա: Մի գղղ թէյի հետ նա խառնում էր իր պատրաստած ներկը և 40—50 սուղաւոր ճանապարհ էր քցում: Առանց խարախութեան նա ոչինչ չէր վաճառում: Անցկացաւ մի տարի: Պատերազմը վերջացաւ: Օտարականները քաշվեցան:

Առուտուրը բոլորովին ընկաւ: Տիրացու Պետուն տեսնելով որ ժամանակը ձանձ քշելով է անցկացնում, դուքանը յանձնեց տիրոջը, մնացեալ ապրանքները, որ շատ քիչ բան էր մնացել, բարձեց իր աւանակի վրա, ընկաւ դիւղերը, ցորենով, ախրով, ձուով... բոլորը սաղացրեց և մնաց բոլորովին անգործ:

Տիրացու Պետուն անգործութեանց շուտով ձանձրացաւ. մտածեց և վերջապէս դարձեալ գտաւ մի սիրելի պարապմունք. առնում էր քաղաքից լույցքի, ստեղ, կոճակ, դանակ, հուլունք, սապոն... բաժնում էր իր բոլ աւանակի վրա դեռ ինքն էլ վրէժ բազմում ու տանում գիւղերը սաղացնում: Տիրացու Պետայի ձայնը շատ քաղցր և կրթված ձայն էր: Բոլ աւանակը թէն ոչ մի տեղ ձայնագրութիւն չէր սովորել, բայց տիրացու Պետուն, (ճանապարհի երկարութիւնը կարճացնելու համար) երբ որ սկսում էր մի երգ կամ մի շարական սանդ, ինքն էլ անմիջապէս ձայնակից էր լինում նրան և այնպէս աստիճանաբար կլկը: Լացնելով բարձրացնում ու ցածրացնում էր որ համարեա մաղ էր մնում թէ իր սիրովից բաւերէ: Երբ որ երկուսն էլ լուում էին շունչ աւնելու համար, այդ ժամանակ բոլ աւանակի պարանոցից քաշ արած ոսկեղոյն դանակը ձայն էր բռնում:— Այսպէս գեղեցիկ հանդիսով ձանապարհ էր դնում տիրացու Պետուն և իր մանրափաճառութիւնը անում:

VI.

Ամառուայ վերջին օրերից մինն էր: Ն. քաղաքը իր սովորական փողով քուսայնում էր անց ու դարձ անոռներին: Գիւղիկայ ժամը 10-ն էր: Քաղաքի չափուունները դեռ թափառում էին փողոցներում և հանդիպողներին իրանց սուարձութեան համար կծու կծու հայցոյձայններով վիրաւորում ու ծափ տարով հետանում: Այս ժամանակ մի մեծ դաշիւնում կարմիր սեղանի շուրջը նստած մի խումբ ուսումնականներ կամեւում են մի քանի կարեւոր հարցեր վճարել: